ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

«15» դեկտեմբերի 2015թվական

ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Հողմիկ

№ 12

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ցոլակյան

Կից ներկայացվում են ՀՀ Շիրակի մարզի Հողմիկի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբեր 14-ի թիվ 8-Ն, 9-Ա, 10-Ա, 11-Ա և 12-Ն որոշումները:

Առդիր՝ 12 թերթ:

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար՝ *ԱՇՈՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ*

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 11404-15
«16» 12 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ
ՀՈՂՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 12-Ն

գյուղ Հողմիկ

«14» դեկտեմբերի 2015 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի 2016 թվականի բյուջեն համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Սեյրան Մինասյան	- կողմ	
Վարդան Մինասյան	- կողմ	
Բաբկեն Երանոսյան	- կողմ	
Համբարձում Զաքարյան	- կողմ	
Դավիթ Հակոբյան	- կողմ	

Համայնքի ղեկավար՝ Աշոտ Կյուրեղյան

«14» դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Հողմիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 12-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀՀ Շիրակի մարզի Հողմիկ համայնքի 2016 թվականի բյուջեն

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

h/h	Եկամուտներ	Հոդվածի համարը	Ընդամենը /հազար դրամ/	Վարչական Մաս /հազար դրամ/
1	2	3	4	5
1000	Ընդամենը եկամուտներ	-	10887.7	10887.7
1100	Հարկեր և տուրքեր	7100		
1110	Գույքային հարկեր փոխադրամիջ.	1731	1438.5	1438.5
1112	Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար		1600.0	1600.0
1250	Դոտացիա	7331	7809.2	7809.2
1256	Այլ դոտացիա			
1330	Գույքի վարձակալության եկամուտներ, այդ թվում՝ համայնքի սեփականության համարվող հողի վարձավճար	7415	40,0	40,0

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ
ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

h/h	Ծախսերի անվանումը	Հոդվածի համարը	Ընդամենը /հազար դրամ/	Վարչական Մաս /հազար դրամ
1	2	3	4	5
4000	Ընդամենը ծախսեր		10887.7	10887.7
4050	Ընթացիկ ծախսեր		10887.7	10887.7
4100	Աշխատանքի վարձատրություն, այդ թվում			
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	6903.6	6903.6
4112	Պարգևատրում	4112	575.3	575.3
4200	Ծառայությունների ևն ապրանքների ձեռքբերում			
4210	Շարունակական ծախսեր, այդ թվում			
4212	Էներգետիկ ծառայություններ	4212	200.0	200.0
4214	Կապի ծառայություններ	4214	100,0	100,0
4220	Գործուղումներիև շրջագայությունների ծախսեր			
4221	Ներքին գործուղումներ	4221	200.0	200.0
4230	Պայմանագրային այլ ծառայություններ			
4231	Վարչական ծառայություններ	4231		
4232	Համակարգչային ծառայություններ	4232	200.0	200.0
4234	Տեղեկատվական ծառայություններ	4234	80,0	80,0
4250	Այլ մասնագիտական ծառայություններ			
4252	Մասնագիտական ծառայություններ	4241	100,0	100,0
4260	Նյութեր	4251		
4261	Գրասենյակային նյութեր և հագուստներ	4261	200,0	200,0
4264	Տրանսպորտային նյութեր	4264	400,0	400,0
4268	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	400,0	400,0
4600	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ			
4634	Այլ նպաստներ բյուջեից	4729	800,0	800,0
4700	Այլ ծախսեր, այդ թվում՝			
	Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններից	4819	50.0	50.0
4723	Պարտադիր վճարներ	4823		
4771	Պահուստային միջոցներ	4891	678.8	678.8

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հողմիկ համայնքի ղեկավար՝ Աշոտ Կյուրեղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ
ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 11-Ա

գյուղ Հողմիկ

<<14>> դեկտեմբերի 2015 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 02-Ի ԹԻՎ 11-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, համայնքի ավագանին

որոշում է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 5 (հինգ):
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 13-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 11-Ա որոշումը:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ

կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Սեյրան Մինասյան - կողմ
Վարդան Մինասյան - կողմ
Բաբկեն Երանոսյան - կողմ
Համբարձում Զաքարյան - կողմ
Դավիթ Հակոբյան - կողմ

Համայնքի ղեկավար՝ Աշոտ Կյուրեղյան

«14» դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Հողմիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Հողմիկի համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14 -ի
թիվ 11-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային Դրույքաչափը /դրամ/	Պաշտոնային Դրույքաչափի Տոկոսաչափը Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ /%սահմանված	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը /դրամ/	Ընդամենը /դրամ/
Համայնքային ծառայության պաշտոններ							
1.	Աշխատակազմի քարտուղար	1	97000	63,69	1	97000	97000
2.	Առաջատար մասնագետ, հաշվապահ	1	96000	63,03	1	96000	96000
Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ							
3.	Գրադարանավար	1	75000	49,24	1	75000	75000
4.	Հարկային գործակալ	1	80000	52,52	1	80000	80000
5.	Հավաքարար	1	75000	49,24	1	75000	75000
Ընդամենը		5	423000		5	423000	423000

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հողմիկ համայնքի ղեկավար՝ Աշոտ Կյուրեղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ
ՀՈՂՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 9-Ա

«14» դեկտեմբերի 2015 թվական գյուղ Հողմիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, համայնքի ավագանին

որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Սեյրան Մինասյան - կողմ

Վարդան Մինասյան - կողմ

Բաբկեն Երանոսյան - կողմ

Համբարձում Զաքարյան - կողմ

Դավիթ Հակոբյան - կողմ

Համայնքի ղեկավար՝ Ա. Կյուրեղյան

«14» դեկտեմբերի 2015թվական
գյուղ Հողմիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Հողմիկի համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի
թիվ 9-Ա որոշման

Գույքացուցակ
ՀՀ Շիրակի մարզի Հողմիկ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի

Հ/Հ	Հիմնական միջոցի անվանումը	Ձեռքբերման տարին	Քանակը	Արժեքը
1	Տրակտոր ԴՏ -75 /անսարք/	1988թ.	1	179 954.0
2	Տրակտոր Տ-70 /անսարք/	1989թ.	1	236 302.0
3	Տրակտոր Տ-16 /անսարք/	1987թ.	1	105 117.0
4	Տրակտոր Տ-40 /անսարք/	1990թ.	1	147 378.0
5	Ավտոմեքենա ԳԱԶ_83 /անսարք/	1989թ.	3	151 101.0
6	Ավտոբուս ՊԱԶ-67214 /անսարք/	1989թ..	1	219 066.0
7	Կուլտիվատոր ԿՊՍ-4	1989թ.	2	8950.0
8	Գութան-ՊԼՆ-4.35 /անսարք/	1989թ.	2	4889.0
9	Կցասայլ 2ՊՏՍ4 /անսարք/	1988թ.	2	17 441.0
10	Կարտոֆիլացանիչ /անսարք/	1989թ.	1	39 310.0
11	Գոմաղբի ցրիցչ /անսարք/	1990թ.	1	13 766.0
12	Ցիստերն 5տ	1963թ.	1	-
13	Ցիստերն 9տ	1970թ.	1	-
14	Ցիստերն 10տ	1979թ.	1	-
15	Ցիստերն 25տ	1982թ.	1	-
16	Ցիստերն 10տ	1985թ.	1	-
17	Ցիստերն 10տ	1990թ.	1	-
18	Ցիստերն 5տ	1990թ.	1	-
19	ՎԻՄ ՍՄ4	1984թ.	1	-
20	Գյուղամիջյան ճանապարհներ 6.2կմ			-
21	Համայնքապատկան բնակելի տուն		23	-
22	Էլ.աղաց/կիսակառույց/			-
23	Կենցաղի տուն	1990թ.		-
24	Կուլտուրայի տուն, գրասենյակ	1983թ.		-
25	Խմելու ջրագծի ներքին ցանց			-
26	Գրքեր		7210	-
27	Համակարգիչ	2012թ.	1	370.0

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հողմիկ համայնքի ղեկավար՝ Աշոտ Կյուրեղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 10-Ա

գյուղ Հողմիկ

«14» դեկտեմբերի 2015 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 10-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի ղեկավարի 2016 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի աշխատավարձի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 23,02 %-ի չափով՝ 152300 / մեկ հարյուր հիսուներկու հազար երեք հարյուր/ դրամ:
2. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի ղեկավարի 2015 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու և համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ12-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 10-Ա որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ

կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Սեյրան Մինասյան - կողմ

Վարդան Մինասյան - կողմ

Բաբկեն Երանոսյան - կողմ

Համբարձում Զաքարյան - կողմ

Դավիթ Հակոբյան - կողմ

Համայնքի ղեկավար՝ Աշոտ Կյուրեղյան

«14» դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Հողմիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ
ՀՈՂՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 8-Ն

գյուղ Հողմիկ

«14» դեկտեմբերի 2015 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 9-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 9-Ն որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ

կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Սեյրան Մինասյան - կողմ
Վարդան Մինասյան - կողմ
Բաբկեն Երանոսյան - կողմ
Համբարձում Զաքարյան - կողմ
Դավիթ Հակոբյան - կողմ

Համայնքի ղեկավար՝ Աշոտ Կյուրեղյան

«14» դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Հողմիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14 -Ի ԹԻՎ 8 -Ն ՈՐՈՇՄԱՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

հինգ հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **ութ հազար հինգ հարյուր դրամ,**

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **տասը հազար դրամ,**

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **տասնհինգ հազար** դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **հինգ հարյուր դրամ,**

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **ութ հարյուր դրամ:**

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **չորս հարյուր դրամ**.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով

սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ **մեկ հազար դրամ:**

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **հինգ հարյուր դրամ.**

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **հինգ հարյուր դրամ:**

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար **երկու հարյուր դրամ**՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **մեկ հարյուր հիսուն հազար դրամ.**

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **երեսուն հազար դրամ.**

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ **մեկ հազար դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ **երեք հարյուր դրամ.**

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ **մեկ հարյուր դրամ.**

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ **հինգ հարյուր դրամ.**

3) մեկ շաբաթվա համար՝ **մեկ հազար դրամ.**

4) մեկ ամսվա համար՝ **տասը հազար դրամ.**

5) մեկ տարվա համար՝ **հիսուն հազար դրամ**:

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ **հիսուն հազար** դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ **քսանհինգ հազար** դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **հիսուն հազար** դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ **երկու հարյուր հազար** դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ **հինգ հարյուր հազար** դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ.**

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ **մեկ հարյուր հազար դրամ**:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **մեկ հազար** դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ.**

3) այլ արտաքին գովազդի համար՝ **հինգ հարյուր դրամ.**

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ **յոթ հարյուր դրամ**:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **հինգ հարյուր դրամ**:

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

հիսուն հազար դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **հինգ հազար դրամ**:

13.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար դրամ

14.Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝՝

1) 3 հեկտարից մինչև 5 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար - երկու միլիոն հինգհարյուր հազար դրամ.

2) 5 հեկտարից մինչև 7 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար –հինգ միլիոն դրամ

3) 7 հեկտարից մինչև 10 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար – յոթը միլիոն դրամ

4) 10 հեկտարից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար տասը միլիոն դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **երեք հազար դրամ**

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **երկու հազար դրամ**

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ **մեկ հազար դրամ**

4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական **տասը դրամ**.

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **մեկ հազար դրամ**:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հողմիկ համայնքի ղեկավար՝ Աշոտ Կյուրեղյան